ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-467-04.02.2020,10.04.2020-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին»2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 98-րդ հոդվածում՝

1) 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ ծառայողական տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև բաժնետոմսերի և բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ցանկացած ծառայողական տեղեկության տրամադրումը, այդ թվում՝ բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի), անվանական արժեքի, քանակի, տեսակի և դասի, թողարկողի, բաժնետոմսերով իրականացված գործարքների, բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների, թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ սույն օրենքի 197-րդ հոդվածի իմաստով Հայաստանյան անվանատերերին և Օտարերկրյա անվանատերերին հասանելի տեղեկությունների տրամադրումը.»:

2) 2-րդ մասի 7-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

3) Լրացնել նոր՝ 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունների տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Կենտրոնական դեպոզիտարիան և արժեթղթերի

սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձինք սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունները տրամադրում են տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգին հասանելիություն տալու միջոցով, իսկ այդպիսի համակարգ չմուտքագրված տեղեկությունների կամ անհնարինության այլ դեպքերում՝ համապատասխան մարմնից ստացված հարցմանը գրավոր պատասխան ներկայացնելու միջոցով: Տեղեկությունները տրամադրվում են անվճար, բացառությամբ թղթային ձևով տրամադրված տեղեկությունների, որի համար հատուցման կարգը և չափը նախատեսվում է տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 197-րդ հոդվածում լրացնել նոր՝ 13-րդ մաս.

«13. Սույն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված մարմինների կողմից՝ Հայաստանյան կամ Օտարերկրյա անվանատերերի մոտ առկա տեղեկությունների վերաբերյալ հարցումների դեպքում, Կենտրոնական դեպոզիտարիան սույն հոդվածում սահմանված ժամկետներում և կարգով դիմում է անվանատերերին և դիմումի հիման վրա ստացված տեղեկությունները փոխանցում է հարցումն իրականացնող մարմնին:»:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրման կարգը սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում:

ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ
Կ-467-04.02.2020,10.04.2020-ՊԻ-011/1

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Արժեթղթերի շուկայի մասին»2007 թվականի հոկտեմբերի 11-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 98-րդ հոդվածում՝

4) 2-րդ մասի 6-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազությանը, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեին, Հայաստանի Հանրապետության հատուկ քննչական ծառայությանը, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայությանը, Հայաստանի Հանրապետության Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեին և Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը Կենտրոնական դեպոզիտարիայի և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձանց կողմից հաճախորդի բացած արժեթղթերի հաշիվների ցանկի, յուրաքանչյուր հաշվի տեսակի և կարգավիճակի վերաբերյալ ծառայողական տեղեկությունների տրամադրումը, ինչպես նաև բաժնետոմսերի և բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի) վերաբերյալ ցանկացած ծառայողական տեղեկության տրամադրումը, այդ թվում՝ բաժնետոմսերի սեփականատերերի (անվանատերերի), անվանական արժեքի, քանակի, տեսակի և դասի, թողարկողի, բաժնետոմսերով իրականացված գործարքների, բաժնետոմսերի նկատմամբ սեփականության իրավունքի սահմանափակումների վերաբերյալ տեղեկությունների, թողարկողի բաժնետոմսերի սեփականատերերի վերաբերյալ սույն օրենքի 197-րդ հոդվածի իմաստով Հայաստանյան անվանատերերին և Օտարերկրյա անվանատերերին հասանելի տեղեկությունների տրամադրումը.»:

5) 2-րդ մասի 7-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

6) Լրացնել նոր՝ 3-րդ մաս.

«3. Սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունների տրամադրման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: Կենտրոնական դեպոզիտարիան և արժեթղթերի սեփականատերերի (անվանատերերի) ռեեստրի վարման իրավունք ունեցող այլ անձինք սույն հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկությունները տրամադրում են տվյալների էլեկտրոնային տեղեկատվական համակարգին

հասանելիություն տալու միջոցով, իսկ այդպիսի համակարգ չմուտքագրված տեղեկությունների կամ անհնարինության այլ դեպքերում՝ համապատասխան մարմնից ստացված հարցմանը գրավոր պատասխան ներկայացնելու միջոցով: Տեղեկությունները տրամադրվում են անվճար, բացառությամբ թղթային ձևով տրամադրված տեղեկությունների, որի համար հատուցման կարգը և չափը նախատեսվում է տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ:»:

Հոդված 2. Օրենքի 197-րդ հոդվածում լրացնել նոր՝ 13-րդ մաս.

«13. Սույն օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված ~~անձանց~~ մարմինների կողմից՝ Հայաստանյան կամ Օտարերկրյա անվանատերերի մոտ առկա տեղեկությունների վերաբերյալ հարցումների դեպքում, Կենտրոնական դեպոզիտարիան սույն հոդվածում սահմանված ժամկետներում և կարգով դիմում է անվանատերերին և դիմումի հիման վրա ստացված տեղեկությունները փոխանցում է հարցումն իրականացնող մարմնին:»:

Հոդված 3. Անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

2. Օրենքի 98-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով նախատեսված տեղեկատվության տրամադրման կարգը սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումն ընդունվում է սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում~~մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը~~:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ (Կ-467-04.02.2020-ՊԻ-011/1) ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

	Առաջարկի փոփոխության, լրացման) հեղինակը	Օրենքի նախագիծը, նախագծի մասը, որին վերաբերում է առաջարկը	Առաջարկը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկի վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
	1	2	3	4	5
	Կառավարություն	Նախագիծ	1. «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 1-ին հոդվածի 1-ին մասում «Տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով» բառերից առաջ ավելացնել «Հայաստանի Հանրապետություն» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
			2. Նախագծի 1-ին հոդվածի 1-ին մասում «քանակի» բառից առաջ ավելացնել «անվանական արժեքի» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է

			3. Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «իսկ այդպիսի համակարգ չմուտքագրված տեղեկությունների» բառերից հետո ավելացնել «կամ անհնարինության այլ դեպքերում» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
			4. Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «հատուցման կարգը» բառերից հետո ավելացնել «և չափը» բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
			5. Նախագծի 1-ին հոդվածի 3-րդ մասում «նախատեսվում է» բառերից հետո ավելացնել «տեղեկությունների տրամադրման կարգը սահմանող՝ » բառերը:	Ընդունվել է	Ընդունվել է
			6. Նախագծի 2-րդ հոդվածում «սահմանված անձանց» բառերը փոխարինել «սահմանված մարմինների» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է
			7. Նախագծի 3-րդ հոդվածում «մինչև 2020 թվականի հուլիսի 1-ը» բառերը փոխարինել «սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է